

պահուի վատիկանի թանգարանին մէջ: Ու մենք ի՞նչ ունինք գեղա-
րուեստի գործերէն, որ կարենայ ապրիլ միջազգային զուլիս գործոց ան-
մահներուն շարքին մէջ: Ոչինչ... Այլազգային նկարիչն գիտենք որքան
հոշակ ունի մեր մէջ, սակայն արուեստի ո՛չ մէկ զրական գրքի մէջ
կը գտնենք անոր յիշատակութիւնը:

Aimera la sagesse, et ne sera point sage... Անորէ Շէնիէ
անշուշտ մեզի համար մարգարէացած չէ իւր այս յոռետես միտքը: Մեր
ցեղը դեռ նոր սկսաւ կարեւորութիւն տալ գեղարուեստի:

(Շարայարեղի)

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԶՍԻՊԱՅՈՒՄԸ¹

Առաքելոց Ներքողը եւ Առաքելոց շարա-
կանները

Ս. Գ. Նարեկացի եւ Ս. Ն. Շնորհալի

Մեր մատենագրութեան մէջ անձինքներ
կան որոնց վրայ որքան որ ուզուի կա-
րելի է գրել. Նարեկացիի եւ Շնորհալիի
այդ թիւէն են:

Ապրած տարբեր դարերու եւ տարբեր
միջավայրերու մէջ, զիրենց զուգակշռողն՝
հայրենասիրի մարուր հոգին է, ազգային
ճշմարիտ վանականի տիպարն:

Երկուքն ալ անխտիր՝ եթէ ոչ սրբուած
յորովայնէ այլ ընտրուած՝ մայր աշխար-
հին տազնապներուն մէջ ծնան. առաջին
հայեացքով, իրենց շուրջ տեսան պատե-
րազմի աւերները եւ կոտորածները. զար-
հուրած մարդկութեան չարութիւններէն՝
անապատները ապաւինեցան այդ շուշա-
նափայլ մարուր հոգիները, եւ հոն իրենց
սիրտը բուրվառ յորինելով, հայրենասի-
րութեան կրակով, խնկեցին ազգային մեծ
սուրբին, Ս. Կոյս Աստուածածնայ առջեւ,
իրենց բովանդակ իղձերը եւ ցաւերը, զգու-

շանալով չի վիրաւորել անոր մայրական
սիրտը՝ բողոքի կամ դատապարտութեան
աղաղակով մը. ընդհակառակն թշուառ
մարդկութեան բոլոր մեղաց ծանրութիւնը
հառաչելով եւ արտասուելով առին իրենց
անմեղ ուսերուն վրայ եւ աստուածային
ողորմութիւնը խնդրեցին:

Թշնամի աղմուկի համբաւը իրենց եւ
տեէն վազեց. երախտագէտ ժողովուրդը
այս կամաւոր մարտիրոսներուն մէջ իւր
հանդերձելոյն փաստարանները ողջունեց.
նախանձախնդրի անոնց յիշատակին, երդ-
մամբ որդւոց որդի փոխանցեց այդ իւր
սրտին անմոռաց անունները. իւր բոլոր
ցաւերուն, բոլոր ուրախութիւններուն մէջ
Նարեկացւոյ աղօթքներուն, Շնորհալոյ
երգերուն յատուկ տեղ մը վերագրեց.
վատահ անոնց բերնով եւ անոնց զօրու-
թեամբ վանելու դեներու լեզունները, փա-
րատելու հիւանդութիւնները եւ իջեցնելու
երկնքէն՝ հրեշտակաց բանակները, աս-
տուածային շնորհներով զեղուն:

Ժողովրդականացած Հայ վանականու-
թեան այս երկու հրաշակերտները՝ հոգե-
կան մի եւ նոյն ձիրքերով օժտուած կը
ներկայանան մեզի, այս տարբերութեամբ
սակայն, որ ժամանակով կրտսերը՝ ան-
դրանկին յարգանաց պարտը մը հատուցած
է: Շնորհալին զարմացմամբ տեսած կը

1. Տես Բազմավէպ 1914 թ. 468.

Թուի Նարեկացւոյ մէջ զարգացած՝ ինչ որ իւր մէջ ընծիւղիլ սկսած էր:

Այս տեսակետով առաքելոց շարականները կ'անդրադառնան առաքելոց ներքու դին մէջ:

Շարական էջ ԽԴ Ներքող՝ էջ 164 տող 36

Որ զէութին անճառելւոյ Միանին. յայտնու. Թեմար Հօր ի վերուստ դաւանեալ. և երանական արժանացեալ շնորհի. վէմ անվանելի ի զրաց զփոքոց:

Խորհրդականն ամանակի այսր յախտնի սկսման և լրութեան, ընտրեալն և փառազարդեալն Կիփաս: Կենարարին շրթամբք երասնալ և բարեխարոյթեմբք բարձրացեալն Հօր ուշադրեալ և իմաստնացեալ. և ուղղահամոյր դասնամբք հոգւոյն իմաստից տեսեալ զանժամանակ պատճառ անքննի ծննդեանն, արժանապէս բարգաւաճեցաւ բանաւն անդին, երանի է քեզ սխմողն ժառանգ յոյնանու:

Բառացի նմանութիւն մը չէ որ պիտի ցուցնեմ, որքան ներշնչման ծագումը իմաստի նոյնութեան մէջ:

Համեմատութիւնս կը դառնայ Պետրոս առաքելոյն զԲերիաոս Որդի Աստուծոյ դաւանելուն շուրջ. որուն պատճառաւ արժանացաւ աստուածային երանութեան:

Շարական էջ 1049 Ներքող էջ 158 տող 31

Հայր առաքող Միանին որում ետոր յաշխարհի զընտրեալս քո ի սկզբանէ աղալանօց սոցա ողորման, Փառացն Հօր ճառազայթ որ շնորհեցեր աշխարհի լուսաւորիչ զտաքեալսն, Կենդանորար սուրբ Հոգի որ ի լեզուս բաժանեալ ճանգեալ ի սուրբ առաքեալսն:

Վասնից յամենասուրբ գործութեան աստուարանական պատճառանութեան՝ զկնի մաքրակնեցող և Խորաբար, բոց ճանապարհորդութեանն առ առաքողն ճեպեալ ճասին, յանոյթմանկաց տեսնու պատկերի զուսթք բերկրանօց, և զորութիւն անուան կողմոցն փառաց ինքեան պատմէին... Ո՛վ աստուածա՛ն զճգնասց ամենայնիւ զայն կառարեալը բազմաբեւր բարդեալ բարուրեմբք. իսկայպէս շնորհիւ պատարեալը. սպէնիսզ պարզեօց լցեալ, Խօթանանիկի երկրակի լեզուացն այլապես ձայնիցն ի մի տեսակ զուսթքութիւն խօսակցութեան ճամնաւաւ ծնէ:

Ճարականին առաջին երկու տունները կը ծանրանան առաքելոց ընտրութեան՝ և անոնց աշխարհս լուսաւորելուն վրայ. ներքողն ուղղակի կը բացատրէ անոնց գործունէութեան կերպն. այլ երկուքն ալ կը միարանին Ս. Հոգւոյն օժանդակութիւնը ցուցնելու որ լեզուակերպ իջաւ անոնց վրայ և լեզուախօսութեան շնորհքը բաշխեց:

Շարական էջ 1045

Իմաստութիւն երկնային իրեալ ի վերուստ. ժողովել զընտրեալսն ի սկզբանէ զյիմարս աշխարհի. և լցեր լուսով քո իմաստութեան ճաւածիլ սրբօք զխաւարն անդիտութեան ի մէջ:

Ի ծովու նմանապարհորդեալ ամենիտ ընթացիւ, ի ծովակէ կոյիցն քորսորդս ամբաւնից կենդանեցող ի մահ, զի ի ծովէ աշխարհի որսայցիս զքամակամբս ի կիսով:

Բանաւոր երկրի մը լայն երկնային որ ետուր զգնեմ ի կենսի ի լեզուս քանին մը լայնացաւ և առաքիցող սերմանիլ յոգիս լամնաւորաց:

Որ զօրինակ երկուտասան առքեւոց քոք Քրիստոս, և զեղծամասնութիւն ընտրեցող աշակերտացն յառաջողոյն ծառայեց ի թիւ արմատեմեաց և աղբնրացմ Յաղիմայ:

Որ չինեցեր զտուն քո զեկեղեցի. իմաստութիւն Հօր Յիսուս. և կանգնեցեր ի սմս սիւնս զօթմարտեան Հոգւոյն զօրութիւն. և առաքեցեր զծառայս քո սուրբ զառաքեալսն, կոյն զհիթմիմոս յարբուի ուրախութեան խառնեցելոյ բաժակին:

Ներքող էջ 158 տող 6 Նրկոտասայի կայլակ աղերիաց. (տող 27), իսկ Խօթանանիցն ճառ փոխարկեալ զգէմս բանիցն, յաւետ ըզգէական և ախորժիկ խաբէրող ցուցանի: Քանզի զայսքանեց բազմազամար դասուց ընտրելոց ո՛ր բան զօրացի ի նիթ ներքողից:

Էջ 258 տող 21 Եւթամասնութիւն քոյս արմաւն. Եւթամասնութիւն յեղիմ...:

Ձոր բանն Աստուած առ ի Աստուծոյ անժամանակ իսկութեմբք մնեալ... ոչ սոսկ և ոչ վայրագեալ, այլ մեծի իրակութեան նշը. խոր զմեզ սրբազանից դասք առաքելոց վերադիցեալ:

Էջ 160 տող 38 Իսկ պաշտօնէն շ ուր ի անտեսա... Էր զկամեցն Աստուծոյ զպատգամս ընդ արարածս առարանեցան. և որպէս զարարչական բանից երկվարս զծովա՛ծովի ալիս կոկնցիմ... և զկարծրացեալ մտաց անդաւաճա՛ն արօրա՛ն զերեւել զերամիկիցիմ... և արարողին արքա սուրբ ճանապէհ՝ ընդ ճնոարեան վարս արշաւեցին. և իբր զանժակ զաւերի ի մի յարկի զաշխարհս ամենայն ոտմար լափեցին... Եւ ի ծրկմորաց դասուց կոյիցեալ՝ զրամակալմ կոյստ ուղկամիցիմ. և ի ճաւածաց ի սոյն ճառաբեալը՝ զխալեցեալ Մասնաւոր պատմեցին, և ի հիթմիմոսս զմասն ողորմեալ զմեզ և զնա պատիւր կուսն մարբեցին:

Միակ համեմատութիւնն է գուցէ ուր բառացի նմանութիւններ կը տեսնուին. աւելորդ պիտի համարուի բացատրութիւն մը:

1. Սրբոյ Հօրն մերոյ Գր. Նարեկացւոյ ճառք. Ներքող ի սուրբ առաքեալսն. վենետիկ Ս. Վազար 1827:

Շարական էջ 1049

Ներքող էջ 151 տող 25

Որ տիրական իշխանու-
թեան հաղորդաւ արարել
զսուրբ զառաքեալսն, կա-
պել և արձակել զորդիս
մարդկան յերկինս և յեր-
կրի, և աթոռակէց լինել
ծեղ խոստացար յորժամ
նստին յաթոռ զատոգա-
կան,

Եւ այսքանեօց համար-
ժակութեամբ ըստմամա-
նեայ շնորհիւ ամբարեւել և
յաւէտ լցեալ և քնակն
մարքեալ զքնակութեան վե-
հին բարեխարութեան զփա-
կանս վերնկալայց և եռ-
խաջաց փառօց տիրապէս...

Էջ 152 տող 2 Սուտի
անկարող և անանջրպետ,
միակենցաղ և զուգակցորդ
ընդ Քրիստոսի գոյց փա-
ռաւորեալց, փանգի և գոյնի
հայցեալ միածինն սու պա-
տուակէցն վերընծայեալ
զբանքն մարգարէս, կա-
միմ և սոցա ընդ իս պեր-
ճանալ Հոսի ի ցում պար-
զեալ:

Ներշնչումը կատարեալ է. իմաստներու
նշոյնութեան տարակոյս չի մնար. Ուս-
քեալները ըստ շարականին կապելու և
արձակելու տիրական իշխանութեան մաս-
նակից են. ըստ ներքողանի՝ երկնքի փա-
կանքներուն. մին պատճառն կու տայ միւսը
արդիւնքը: Երկրաւոր իշխանութենէն վերջ,
երկնքին մէջ Քրիստոսի հետ զատողական
աթոռներուն և փառաց մասնակից կ'ըլ-
լան ինչպէս որ ինքն Յիսուս խոստացեր
և խնդրեր էր Հօրմէն:

Շարական էջ 892

Ներքող էջ 160

Լուսաւորեալք ի սոցա
զպրոթնէն. փառաւորեմք
սուրբ զՆորրորդութիւնդ:

Եւ արդ՝ եթէ Նորրորդու-
թեան իսկութիւն ի լեզուէ
մերմէ ծանուցաւ, և արա-
րին ձեռք պատմեցաւ և
Աստուծոյ որդին ի մէջ
բարոցեալ, խոր անքնի
վերին պազուկաց յերկրի
յայտնեցաւ...

Շարականը համառոտաբար կ'երգէ Ներ-
քողին թուարկութիւնը՝ առաքելոց ձեռքով
երրորդութեան վարդապետութեամբ՝ մարդ-
կանց լուսաւորութիւնը:

Շարական էջ 1050

Ներքող էջ 162 տող 21

Բարեկամք Քրիստոսի,
հազարադեօց աստուածա-
յին խորհրդոյն. որք ի
մոսամուտ մեղաց ծովն
վերածէք զմարդիկ ի
կիսմս ամմալ:

Եւ ի իստարիմ կու-
պաշտութիւնէմ վերա-
ծեալ ի փոսոս զսոսմ
սպամց երկրի, փրկեալս
և ազատեալս՝ առգանին
անթիւն արգանդի անխաւ:

գալի ծնունդս և անեղծ ժա-
ռանդս՝ հասարակաց փրկ-
կողիմ տեսնո ըմծայն-
ցիմ,

Իը ներքողին երկուքն ալ առաքեալ-
ներու զործունէութիւնը որոնք աստուա-
ծային խորհուրդներու մասակարարներն
ԸԼԼալով (ըստ շարականին), մկրտութեան
աւագանին ձեռքով (ըստ ներքողին), փըր-
կեցին մարդկութիւնը կապաշտութեան
հոսանուտ մեղաց ծովէն և արժանացու-
ցին Քրիստոսի յափտենական կեանքին:

Շարական էջ 1076

Ներքող էջ 115

Ի բարեբուն Հօգոյն վե-
տակն և որոտմունք տիե-
զեբաց ցոյմունք հրեղէմք
աստեղը լուսափայլք:

Վերպելոց ի ծովային
ծփանաց աշխարհի՝ աս-
տեղապէս ուղղիչք և ա-
ռաջնորդիչք. Պայծա-
ռափայլ լուսաւորք, հե-
րագունք և Թնաւորեան,
շանթք կիզանողք, ցոլ-
մունք անգաղիմ, հոսանք
հրեղէմք..... Էջ 156 տող
34 Չայնատուք վեհեք անեղ
որոտմամ:

Առաքելոց նուիրուած « Ի յսնահման
ծովէն » համարածի շարականէն միայն այս
տունը ներքողին մէջ համապատասխան
ամփոփ համեմատութիւն մ'ունէր, մնացած
տունքը իրենց ներկայացուցիչ իմաստ-
ները ցրուած ունէին ներքողին մէջ. հե-
տեաբար աւելորդ համարեցայ քաղել զա-
նոնք և երկնցնել համեմատական սիւնակ-
ներու շարքն:

Հ. Լ. ԱԹՃԵԱՆ

Շարայարկի

ՈՒՐ Է ՇՐՁԱՊԱՍՏ ՏԻԵՁԵՐԱՏ

Արևն արդէն ժամեր առաջ արևմտեան
կողմէն սահելով՝ աներևութացած է և իր
վերջաւոր ճառագայթները ուրիշ աշխարհի-
մը գաւառներու վրայ դարձուցած: Խոր
է գիշերուան լուսթիւնը. այն գիշերներէն